

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ՆՈՐ ՕՐԻ»

ՆԱՄԱԿ ԿԱՐ ՈՒՆԷ ԹՂԹԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՊԵՏԵՐ ԵՒ ՈՒՂՂԱԿ ԵՍՈ

Վարչութիւնն ՆՈՐ ՕՐ Լրագրի  
ԳԱՀԻՐԷ

Direction du journal

NOR-OR

Caire

Ձեռագիրներն եւս չեն դարձաւոր,  
ԱՐՏՕՆԱՏԷՐ Ժ. ՄԻՆԵՆԻ

# ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶ ԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՇՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԱՆՈՐԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍ		ՂՐՇ. ՈՒՂՇ
Գանձիւրի համար	սարեկան	50
»	վեցամսեայ	30
Շրջակայից »	սարեկան	60
»	վեցամսեայ	35
ԱՐՏԱՍԱԶՄԱՆԻ ՇԱՄԱՐ		
Տարեկան . . . . .	Ֆրանկ	18
Վեցամսեայ . . . . .	»	10
ՌՈՒՍՅՈՑ ԵՒ ԿՈՂՎԱՍԻ ՇԱՄԱՐ		
Տարեկան . . . . .	րուբլի	7
Վեցամսեայ . . . . .	»	4
ԲԱԺԱՆՈՐԿԱԳՐԻ ԿԱՆԻՔԻ ԵՒ ԹՂԹԱՍԱՐԻ ՍԱՄԻՐԸ		
Թերթին վարչութեան վրայ է		

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԱՊՐԻԼ 18/1 ՄԱՅԻՍ 1901

ՔԱՆ ՓԱՐԱՅ ՈՂՁ

Ա. ՏԱՐԻ ԳԻՒ 85

## ԳՈՐԾԱԽՈՐԱԿԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ Հ Ա Ն Գ Է Ս ՄԱՅԻՍ 18

Այս օր Մայիս 1, Եւրոպայի գործաւորներին համար հանգստեան, խրատականայ օր մին է, օր մը խորհրդաւոր:

Չիկայ երկիր մը կամ քաղաք մը Եւրոպայի մէջ, որ չի մասնակցի այս համաշխարհային հանդէսին զոր կը տօնէ այնքան եռանդեամբ Եւրոպայի գործաւորական դասակարգը:

Եւրոպայի կանաչագեղ դաշտերը այսօր ժամադրաւորը կը լինին բուսոր գործարաններու և արուեստանոցներու գործաւորներուն, որոնք կը հաւատարման կը ժողովին, խմբովին մէկը մէկ ճանչնալու, զիրար սիրելու, և գործաւորի մը իրաւունքին վրայ վիճելու և ճառելու համար:

Ահա այս է անոնց դրօսանքը որ անշուշտ թօթեբու և բաժակներու առաջարկման մէջ սեղի կուենայ:

Աստիցներ չի նմանիր այն դրօսանքին զոր մեր Արեւելքիները կընեն թուրքի մէջ՝ Հայաստան փաշայի և Չամբաճայի մարդակոտորածներէն իրենց զրօսաւոր, հոն խմբու համար միմիայն կաթիլ, օղին գինին և ճաշելու համար ծօղման:

Բնական է թէ Թուրքիոյ ժողովուրդը չենք ուզեր մեղադրել, սրբան կառավարութիւնը որ մինչև իսկ պարզ ըզրօսանքի մը համար հաւաքումը կ'արգիլէ կընեն:

Ուրեմն ծափահարենք այն անուրանալի ազատութիւնը զոր այսօր Եւրոպա և մեր աչքին առջև եղիպտոսն իսկ կուտայ իր ժողովուրդին:

Ահաւասիկ այս առթիւ վերջին պահուն մեղ զրկուած թղթակցութիւն մը քաղաքիս հայ գործաւորներէն, զոր նոյնութեամբ կը տպենք:

... Խմբագրութիւն  
«Նոր-Օր» Լրագրի

Ձեր հանդէսն լինելով կապակից մեր ազգայնութեան գործերին, ես և համայն գործաւորներս կը ինդրենք հրատարակութիւնը ներկայ նամակնուս, թէ և որքան և անձուկ լինին պատուական «Նոր-Օր»ի սինակներն:

Ընդունեցէք...

ԱՏՈՄ

«Այսօր Մայիս 1ի առթիւ Եղիպտոսը նակ հայ գործաւորներս նաև պատիւ ունեցանք մասնակցելու համաշխարհային հանդէսին որուն առթիւ միմիայն մը կազմուած էր

տեղոյս պարտեզին մէջ: Ժողովարարը լեցունած էր գործաւորներու խուն բաղնիքները: Բեմը բազմած էր ժողովին նախագահը. շքեղապատեայ ազգայնութեանց ատենախօսները:

«Տ. Շաւարշ Շիշմանեան» ի դիմաց հայ գործաւորների իբր ատենախօս՝ ամփոփ կերպով նկարագրեց վերջին դարու գործաւորական զգալի շարժումներն ի Ֆրանսա և Աւստրիա: Յայտարարեց թէ ապագան ներկային աւելի միմիայն պիտի ըլլայ գործաւորին համար: Բողոքեց Պուստուազեայի վերջին արդէնքերը անթիւ ես բնաւ: Հայ ատենախօսը ծափահարուեցաւ կեցցէներով:

Փափաքելի էր որ մեր երիտասարդները փոխանակ սրճարաններու մէջ կեդրոտ կեանք վարելու, Պ. Շիշմանեանին օրինակին հետեւէին:

### ԱՐԴԻ ՆՁԱՆԱԽՈՒԹԻՒՆԷ

(Շար. Ուսիրդ թիւէն)

Այն ազգերը որոց մտաւորականութիւնը զարգացման որոշ աստիճանի մը հասած է, բնութեան այս մասին զծած սահմաններուն համաձայն, իրենց օրէնքներուն մէջ արձանագրած են միակնութիւնը: Դիտարարար այդ օրէնքները յոռի են: Մասնաւոր անբաւական են և այդ մարդուն գերիշխանութեան մշտահալած գաղափարին զորով կը կրեն:

Օրինաց այս թերութենէն, որուն պատճառը այր մարդուն և կնոջ մէջտեղ դրած տարբերութիւնն է, յառաջ եկած և սուսկ լի գրութիւն մը, պոստիվութիւնը, մարդկային մարմնոյն տուրեալը: Պոստիվութեան պատճառները բողոքողի են. իսկ անոր սկզբունքը մի է: Հին և արդի ընկերութեանց այդ պատահապէս վրայ ուրիշ յօդուածի մը մէջ պիտի խօսիմ:

Ամուսնութեան առեւտրամբ կատարելը կ'իմացնէ թէ փոխադարձ հաճութիւնը անոր մէկ զանց անուած տարրն է: Կամքը այր մարդուն էր: Երբեք կնոջ խորհուրդ չէր հարցուեր իր հակամիտութեանց մասին: Եւ այսպէս պէտք էր ըլլաւ հարկաւ. միթէ հողը զեռ չգրաւած՝ անոր խորհուրդ կը հարցնէին:

Կնոջ գնմամբ ամուսնութիւնը, որ ամենէն հին ժամանակները ծանօթ է և որուն աւելի կամ պակաս կերպարանափոխուած գաղափարը մինչև մեզի հասած է, հրեական ամուսնութեան վաղեմի արարողութեանը մէջ մուտ գործած էր: Միայն թէ, անոնց մէջ, տասներեք թուանշանին տեղ, կայ դրամ մը զոր ամուսնը կնոջ կը յանձնէ՝ կոմ մատանի մը անոր ըսելով, «Ահա այս

մատանիով, այս դրամով դու տարածեր, ժօրէն ինծի կը սահմանուիս»: Բարբիները՝ ասիկ գատ կը պահանջէին որ կնոջ ապագան նուիրատուութեամբ մը ապահովուեր: Այս սովորութիւնը հրեական արդի արարողութեան մէջ զեռ գոյութիւն ունի:

Հոովմէական իրաւագիտութեան մէջ, իւրկանդեան ստորին կայսրութենէն յառաջագոյն ժամանակները, ամուսնութեան պահանջանքներ կային: Կրօնական ձևը, կրեւորագոյնը, որ տարօրինակ հանդիսաւորութեամբ շքեղապատուած էր, ֆօնմաւացիօ կը կոչուեր. ասոր ազգեցութիւնը շատ մեծ էր: Ազնուական դասուն ամուսնութիւնն էր այս: Գոնփամոցոյի մէջ կար առեւտրաման խորհրդանշանը: Երբ հարսը փետային սուսը կ'առաջնորդուի յաղթական կերպով, թափօրը հարսանեկան տանը առջև հասնելով կանգ կ'առնէ: Եւ որպէս զի հարսը սուսը մտնէ, Յունաստանի մէջ եղածին պէս, պէտք է որ առեւտրաման ձևացնու: Ամուսնը գիրկը պէտք է առնէ գայն և սեմին վրայէն անցունէ առանց սարքերը անոր գոյելու:

Յունաց մէջ առեւտրաման կեղծիքը առեւելայէս յափշտակութեան մը ձևը ցոյց կուտայ: Երբ ամուսնը իր խօսեցեալը վեր կը վերցնէ սեմին վրայէն անցունելու համար, աղջիկը բանի մը ծիչ կ'արձակէ, զիմարդը կը ձևացնէ, մինչդեռ հարսը եղող կ'իները զայն պաշտպանելու ձևեր կ'ընեն:

Հոովմայցեոց մէջ գնմամբ ամուսնութիւնն ալ կար, և վերջապէս փոխադարձ հաւանութեամբ ամուսնութիւնը՝ ժողովրդական դասակարգին մէջ:

Վերջէն, ստորին կայսրութեան մէջ, քրիստոնէութեան միջոցաւ որ ինքն ալ երբայական օրէնքներուն ազգեցութիւնը կրած էր, հոովմէական ամուսնութիւնը նոր հանգամանք մը զգեցաւ:

Նշանախօսութիւնը, Հրեայ մէջ եղածին պէս, ամուսնութենէն առաջ եղած նուիրատուութեան մը մէջ կը գոյանայ: Արարողութիւնը բաւական հետաքրքրական է: Ընծայով մը հանգերձ համբուրի մը մէջ (օտջուրով) կը կայանայ. յետոյ կը յանձնուի մատանի մը կամ դրամ մը: Ինչպէս կը տեսնուի, այս ամենը ուրիշ բան չէ բայց միայն խոստուրդ մը, ձուլում մը Գերման երբայական, Յոյն և Հոովմէական սովորութեանց: (Ինչպէս ալ ըլլայ). կ'երեկ թէ, յորմէ հետէ քիչ մը փափուցութիւն եկաւ նախնական բարբերը նորացուց, պատմութեան արձանագրած ամեն տեսակ ամուսնութիւններէն առաջ նշանախօսութիւն մը կատարուած է միշտ:

Շատ առաջները նշանախօսութիւնը կազմեցին ամուսնութեան ձևը, երբ աւանդութիւնը անոր էութիւնը կամ հիմը կը կազու-

ցանէր: Վերջը եկան փոփոխութիւններ և նրբութիւններ՝ մինչև որ կը գաննէր շատ նրբանկատ և իրենց հիտանքներով շատ անհեթեթ զանազանութիւններ: Ահա այսպէս կը հանդիպէր ապանի խօսքերով նշանախօսութեանց որ եկեղեցական Երեսնից ժողովին առաջ բուն նշանախօսութիւնը կը կազմէին: Չանսր կը հարկադրէին ներկայի խօսքերով նշանախօսութեանց, որք մինչև Երեսնից ժողովը նոյն իսկ ամուսնութեան հետ կը շփոթուին:

Սոյն ժողովը պարտաւորեցաւ գրադի մասնաւորապէս այս կերպ նշանախօսութեամբ որ կը գտնար կ'ըլլար բուն ամուսնութիւնը: Ահա այս է ճշդիւ նշանախօսութեան որ և է զատաստանական ազգեցութիւն մը տալու գիտելու վտանգը:

1639 նոյնմբերի մէջ հրովարտակ մը ամուսնութեան խոստում մը վկայով հաստատելը արգիլեց: Դատաստանական որ և է որժէք մը ունենալու համար, պէտք է որ այդ խոստումը երկու կողմանց շարս ապականներու ներկայութեանը գրաւորապէս կատարուեր:

Վերջերը Եկեղեցին ալ խոսնուեցաւ այս խնդրոյն. նշանախօսութիւնները հարսանեկան օրհնութեամբ կատարել սկսան, և դասական վճիռ մը հարկ էր գաննուր ոչնչացընելու համար: Յորպիսի անոնք կային ու կը մնային, խօսեցեալներու ամուսնութեան արգիլքի պատճառ մըն էին, և նոյն իսկ իրենց լուծումն վերջն ալ՝ արգիլք մըն էին հանրային պարկեշտութեան որ խորապէս մուտ գտած էր բարուց մէջ:

Այս կերպով արուած ամուսնութեան հանդիսաւոր խոստումը տոյժի տուգանքի պատճառ կը գտնար լուծման պարագային: Եւ այնպէս ալ հարկ էր որ ըլլար:

Այսօր. մեր սովորութիւնը այսպիսի բան բնաւ չեն ընդունիր: Մասնաւոր թէ բուն նշանախօսութիւնը անհետացած է մեր օրերը: Ներքին, և իրաւագիտութիւնը բնաւ արժէք մը չի տար ամուսնութեան խոստման մը. այլ զայն չեղեալ կ'սկսաւ և իբր անկարող լուծման պարագայի մէջ, տուգանք հարկադրելու:

Անգղիոյ մէջ օրէնքը շատ կը պաշտպանէ ամուսնութեան խոստումները: Նմանապէս Բրուսիոյ և Գերման երկիրներու մէջ: Այդ օրէնագրութիւնները սահմանող ու ճշգրտ պատճառները վճռական չեն թուիր ինծի:

Արդարեւ ինչ է ամուսնութեան խոստում մը, այնպէս որպէս կ'ըմբռնենք այսօր, և անոր օգտակարութիւնը ինչ է:

Խ. ՋՕՂՐԱՊ ԹԱՐԳՍ. Յ. ԱԷԹԵԱՆ  
(Շարունակելի)

ՄԱՐԴ ԹԷ ԴՐԱՄ

Ամէն բանէ առջ մարդ ըլլանք մարդ, որուն այնքան պէտք ունի մեր ազգը, կ'ընէ «Չայն Հայրենեաց» մէկ թղթակիցը իր սոյն յօդուածին մէջ, զոր իր կարեորութեանը ազգաւ կարտասպանը:

Ըստած է թէ «Աղքատութիւնը կեանքի իրական գարոցն է»: Տխուր ճշմարտութիւն մ'է այս, գոնէ թըշուառներու համար: Աղքատութեան վիճակը սակայն յաճախ ապիթ կուտայ քննել, ուսումնասիրել մարդիկ և իրեր իրենց տարբեր ձևերուն ու ձգտումներուն մէջ: Գիտուն թէ տըզէտ, վայրենի թէ գարգացեալ մարդկութիւնը կարծես կը ձգտի առանձինն ու ամբողջութեամբ դէպի մէկ նպատակ, — նիւթական հարստութիւն:

Ազգեր կամ անհատներ երբ կը վրիպին մամնտի պաշտամունքին նուերուած իրենց ջանքերուն մէջ՝ այսպիսիք կարծես կը կորսնցնեն իրենց իսկական արժանիքն ու զերբը յաչս մարդկութեան: Այս կ'ապացուցանէ թէ՛ մամնտին ծայրայեղօրէն ինկարկող գարու մը մէջ է որ դեռ կ'ապրինք, ինչ որ «իսկական բազաքակրթութիւն» չնշանակիր:

Այսպէս երբ մարդկութիւնն իւր ներքին շարժառիթներովն ու ձգտումներովը կը բննես ու բու անձիգ վըբայ ներգործող օրուան շարժումները կը դիտես, կը մտաբես իւրովի թէ հսկայ յառաջադիմութիւններ կատարող այս մարդկութիւնը դեռ վայրենի է, տգէտ է, չար է. կարծես աւերաւութիւններու բնածին զգացումը կը կրէ ան սրտին մէջ, աչքին մէջ նախանձը կը տեսնես. շրթներուն վըբայ՝ թափթըխուր խօսքեր կեղծ ժըպիտներով, բարեկամութեան մէջ խարդախութիւն, սիրոյ մէջ ոճիր, անձնագոհողութեան մէջ անձնասիրութիւն, կրօնի մէջ կուր, խոտուսներու մէջ ստուրթիւն: Այս վիճակին տակ հոգիդ անձկագիւն կը փնտռէ իրական ճշմարտութիւնը, իրական քաղաքակրթութիւնը ու վերջապէս իրական ՄԱՐԴԻՐ: Այս հոգեկան ուրոնումներու մէջ երբ պահանջուած գոհունակութիւնը չգտնիր հոգիդ, այն տոնն պօզանք կը գաս աշխարհէն, կեանքէն ու մարդէն, և կը մղուիս սոգէտ, չար ու վայրենի կը չը մարդկութիւնը՝ բացառութիւններ միայն նշմարելով հոն: Յոռետես մ'իւմ թերևս, մարդիկ սակայն յոռետես չեն ծնիր, իրական կեանքի ծնունդն է յոռետեսը: Երբ մէկը կը տեսնէ մարդկութեան վիշտերն ու ցուերը, երբ կը տեսնէ բռնապետը զահին վըբայ, հերոսը՝ բանտին մէջ, երբ կը տեսնէ անիրաւութիւնը փառաբանուած, արդարութիւնը խաչուած, երբ օրէ օր ականատես կը ըլլայ ընչպիսիսութեան կատարած ոճիրներուն և նախճիրներուն, ուր արցունք ու արիւն կը ընդխառնին, հոգին կը մըրստանայ ու յոռետեսը կը ստեղծուի: Յանուն մարդկային բարօրութեան ու արդարութեան զոհարեալուդ մեծ բայց սա-

կաւթիւ անձերու օրինակները այնքան մը զօրաւոր չեն յեղաշրջելու մտածումներուս այս տիրերայի ընդթը:

Ընկալանաբար խոնականէն գիտելով է որ կը մղուիմ տիրող մտածումները, գործերը արհամարհելի նկատելու երբ այս անտանելիօրէն ողբալի վիճակին պատճառներուն կը հետամուտ՝ զայն կը գտնուիմ մարդկային ընկերա-քաղաքական կազմակերպութեան յոռի գրութեանը մէջ: Միւս կողմէն սիտիանք կը գամ հաստատելով թէ ժամանակի ընթացքին մէջ ընաչընումի աստիճանական բայց անդիմադրելի օրէնքով ամէն բան պիտի բարեփոխուի, և այսօրուան դրամապաշտութիւնը անգի պիտի տայ վաղուան ճշմարիտ գաղափարականին, ճշմարիտ նկարագրին ու ճշմարիտ մարդուն:

Խօսքս մարդկութիւնէն Հայ հասարակութեան մասնաւորելով պիտի ըսէի թէ նոյն երեսովը կը տիրէ Հայ ժողովուրդին մէջ ալ թիւ մ'աւելի չափով: Մէկը որ ճանչնու քննադատել ուզեն՝ անոր նիւթական հարստութեանը կամ աղքատութեանը վըբայ կը ծանրանան, ու ըստ այնմ կը յարգեն կամ կը լըեն. (տարբեր մըրտածողներու բացառութիւնը կը ըստենիմ): Գրամը պէտք մ'է. անոր կարեորութիւնը դիտենք. բայց մամնտան կը կոչը նուիրումնիս մեզ տգէտ կը պահէ ու մեր գատողութիւնը կը խաթարէ՝ ամէն պարագայի տակ նախապատութիւնը գրամին տալով: Անձ մը, կազմակերպութիւն մը ճանչնալու համար սխալ է նիւթական տեսակէտէն միայն նայիլ. նիւթականը շատ անգամ խարստիկ արժանիքը կը ներկայացնէ, իրական արժանիքը անոր բարոյական ու մտաւորական կեանքի մէջ է. ու կեանքը հոգիի նկարագրին է. մարդ առանց անոր մարդ չէ, հոգ չէ թէ գրամի շեղակոյտին մէջ խորգայ: Գրամը մարդ չեղող մարդուն ըով իրական արժանիք, տեսական համբաւ չստեղծել, բայց միաբը, ազնիւ միտքը դարերու ծոցէն կը մնայ մարդկութեան պարծանքը՝ անմեռ, միշտ պաշտելի: Իսկ գրամին ներկայացուցիչ Ուոնտըրլիտներ, Ճէյկուլտներ, աննշան և փոքրօրի՝ դատապարտուած են մեռնելու, իսկ Շէյքսպիրներ, Միլտոններ և Հիւսիսներ՝ մաքի արժանի ներկայացուցիչներ՝ կ'ապրին ու պիտի ապրին, ինչպէս և մեր ցեղին մէջ պիտի ապրին Բաֆֆիններու, Քաթիպաներու, Օտեսաններու յիշատակը քան Միլթայէլեանցներու, Գարակէօղեաններու, Եսայեաններու անունը:

Ընթերցող պէտք չէ հետևեցնէ թէ՛ հարստութիւնը ինքնին դատապարտուի կեանքադրեմ կամ քսակով լեցուն կողմ մտքով անպաճառ դատարկ կը ըլլայ. — ոչ. մեր մէջ չեն պակտիր երկու ուժերն ալ միանդամայն ներկայացնող օրինակներ. որոնց մեր ազգը շատ պէտք ունի այս աղէտներու մէջ՝ կ'իմ միայն իրենք ականջ ունի լսելու:

ԱՊՐԻԼ 11  
ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս կը տեսնէք ստորև թուսահայ քահանայ մը Տ. Տաճատ քհնյ. Մարտիան՝ Եւրոպական թերթերու գրուածէն տարբեր կերպով կը մեկնէ Ապրիլ 11 սովորութիւնը:

Գարեբու յորովման ընթացքին մէջ գործնականութիւն ստացած և ժողովուրդի մէջ արմատացած սովորութիւններն մինն ալ ամէն տարի Ապրիլի 11ին զերար խարելու տղեղ սովորութիւնն է, որ զեռ գոյութիւն ունի ոչ միայն Հայոց. այլ և բոլոր Գըրիստոնեայ ազգերու մէջ: Այս հանգամանքն ինքնաթիւքան ցոյց կ'ուսուայ, թէ այդ սովորութիւնը բոլոր Գրիստոնեայ ազգերու սեպհականութիւնը ըլլալով՝ կորուսած է իր մասնաւոր բնաւորութիւնը և կ'ապ չունի ոչ մէկ ազգի ազգային սովորութիւններու հետ: Անշուշտ հետաքրքրական կը լինի այդ սովորութեան ծագումը ու պատմութիւնը նկարագրել մեր ընթերցողներուն:

Ապրիլ 11 այդ պատարակելի և անմիա սովորութիւնը՝ ամենայն հաւանականութեամբ, ծագում առած է այն անպատկառ լուրին վըբայ որ տարածեցին Յիսուսի Գեըրմանին վըբայ հսկող կաշառուած պահպան զննործը, Յիսուսի հրաշալի յարութեան մասին:

Ինչպէս դիտենք, Հըրից քահանայապետները, ծերերը և զպիւրները բնաւ չէին ուզեր որ՝ ժողովուրդը հաւատար ու համոզուր թէ Յիսուս Գրիստոս իսկապէս յարութիւն առաւ, բան մը որ իրենց գործին չէր դար: Այս պատճառաւ ալ, երբ գարհուրուած պահպանները քաղաք վազելով պատմեցին քահանայապետներուն՝ Յիսուսի յարութիւնը, այս վերջինները կաշառեցին զննործները և հարկապիցին զանոնք որ ժողովրդին այնպէս հաւատացնեն թէ՛ «վերը իրենց քընացած ծամանակ, աշակերտները հիկը և գողցեր են Յիսուսի մարմինը»: Եւ այս լուրը, կըսէ աւետարանիչը, տարածուեցաւ հրեայներու մէջ մինչև այսօր: Յիսուսի յարութեան հետեալ տարիները, Երուսաղէմի քրիստոնեայները՝ հրեայները վրաւորելու, ծագելու և արհամարհելու համար ամէն տարի Յիսուսի յարութեան տարեգարձին օրը, սկսած էին որ և է եղած բան կամ տեղի ունեցած անցք՝ չեղած հրատարակել և կամ սուտը ճշմարտի տեղ պատմել հրեայներուն . . . ձեռք անելու համար:

Երբ Գրիստոնեայութիւնը և Գրիստոնեայ ժողովուրդը դուրս եկաւ Երուսաղէմի պատերէն ու Հըրեստոսին սահմաններէն և տարածուեցաւ ի ոփիւսոս աշխարհի, այդ սովորութիւնն ալ որպէս անցելայի յիշատակ, տարածուեցաւ բոլոր Գրիստոնեայ ազգերու մէջ, միայն այն գանազանութեամբ որ Երուսաղէմի մէջ անոնք կը խաբէին միմիայն հրեայները, իսկ Երուսաղէմէն դուրս ուր հրեայներ չըկային, սկսան խարել և ձեռք անել զիրար: Այսպէսով ժամանակակից Գրիստոնեայ ընկերը յիմարանում է սոյն վերջինը իրեր շհուտի, որ հաւատաց կաշառուած պահպանի խօսքին և համոզուեցաւ թէ՛ իսկապէս աշակերտները գողցեր են Յիսուսի մարմինը:

Բայց թէ ինչու այդ սովորութիւնը կը գործադրուի Ապրիլ 11ին, ատոր պատճառը այն է, որ Յիսուսի խաչելութիւնը տեղի ունեցաւ հրեական Եֆիէ (3333) թուականի Նիսան ամսին 23ին մեր Մարտ 30ին, պատերի կամ բազաքակերաց տօսի 6րդ օրը:

Թագուեցաւ նոյն ամսոյն 23ի վերջին պահուն, որ կ'սկսէր ամսի 24ին — մեր Մարտի 31ը —:

ԳՈՒՐՊՈՆ ՊԱՅՐԱՄԻ ԴԷՊՔԸ

Ահաւասիկ մանրամասնութիւնը մարտ 31ի կերակի օր Գուրպան Պայրամի տօնին առթիւ Տըմայ Պահճէի Պալատին մէջ պատահած դէպքին:

Առաւօտեան ժամը 9ը Յվայրկեան անցած, երբ արդէն 20 վայրկեանի չափ եղած էր որ բղանցը համբուրելու տրարողութիւնը սկսուած էր, յանկարծ սաստիկ երկրաշարժ մը պատահեցաւ որ իւր ուժգնութեամբ կը յիշեցանէր կ. Պօլիսի 1894 յունիսի երկրաշարժը որ այնչափ աղէտներ պատահելուն և մեծ շուկայի կործանուելուն պատճառ եղած է այն տոնն: Ընդունելութեան սրահի մեծ շահի բիւրեղներն այնչափ ուժով իրար զարնուեցան որ կէսէն աւելին կոտորեցաւ. առատաւզէն կոտոր մը վրթաւ և գետին ինկաւ: Եւ որովհետեւ ժամանակէ մը ի վեր լուր կար տարածուած թէ թիւրք, հայ և մակեդոնացի քովթաճիւնները միացած և իտալացի անիշխակներն ալ իրենց հետ առած, սուլթանն ու իր պալատ օղը հանելու գտաւորութիւն մը կը կազմեն, ձեռքապահ տրարողութեան ներկայ գտնուող բոլոր հանդիսականներին մտքէն այնպէս անցաւ այդ միջոցին թէ Տըմայ պաղչէի պալատը տինամիթով օղը հանել փորձած են: Ուստի ամենքն ալ պանական երկիւղէ բռնուած չէին զիտեր ինչ ընելին:

Սուլթանին անձնուիրութեան և հաւատարմութեան ցոյցեր ընող բարձրաստիճան պաշտօնատարները փախուտի ճամբայներ կը փնտռէին: Անոնք որ սուլթանին շատ մօտ կը գտնուէին, քիչ թէ շատ կը զսպէին իրենց վախը, բաշտութիւն ցոյց տալու համար. բայց հետու գտնուողներն առանց պատկառելու կը փախչէին: Բաշաները սարսափոհար կոտորեցին ապակի դուռ մը, աւելի արագ փախչելու համար: Ներքինի մը պատահանէն վար նետեց ինքզինք և գետինն ինկած տոնն մէկ թեք կուրեցաւ. քիչ մնաց որ խեղճը հոն ըսպանուէր ալ, որովհետեւ մօտը գըտնուող պահտորդ զօրք մը տեսնելով որ մէկը պատահանէն վար ցատկեց, փոխատական չարագործ մը կը կարծէ և վրան կը վազէ որ սուլթանովը գարնէ սպաննէ: Եթէ երկրորդ անգամ ալ երկրաշարժի ցնցում մը լինէր, ինչպէս այդ պատահեցաւ 7 տարի առաջուան շորթին տոնն, այդ ժամանակ պալատին մէջ մարդ չէր մնար, ամենքն ալ իրար ետեւէ գուրս կը փախչէին:

Իսկ սուլթանը չնայելով որ ամենքէն աւելի կածկածոտ ու իր անձին դէմ դաւադրութեան ունէ լուրի հաւատք կընծայէ առանց քննելու, կ. Պօլսէն հաղորդուած լրագրական տեղեկութիւններին նայելով, զարմանայի պաղարհնութիւն մը ցոյց տը:

ուեր է այդ միջոցին, առանց վախ-  
նալու և փախուստի ածապարելու:  
Մարաշախա ֆուտա փաշան և սուլ-  
թանի քարաուզար ու երկրորդ սե-  
նեկապետ իզզէթ սէյ, անմիջապէս  
սուլթան Համիտի երկու քովը կանգ-  
նեցան զինք պաշտպանելու համար  
և թախանձեցին որ մեկնի դահլիճէն:  
Ապտիլ Համիտ քանի մը քայլ առ-  
նելով դէպի մտակայ սրահ մը՝ հար-  
ցուց թէ ինչ կայ, ինչ պատահեցաւ:  
Քայց հաղիւ թէ ըստէ մը անցած էր  
սր վերադարձաւ բազմեցաւ դահլին  
վրայ և հրամայեց որ ընդմիջուած  
նուազածութիւնը վերակուրի և արա-  
րողութիւնը շարունակուի:

ԱԶԳ

Առաջիկայ Եւրաթ օր, 4 Մայիս,  
երեկոյեան ժամը 8—10 1/2ին, Սու-  
ճըրս Հովի փառայեղ սրահին մէջ տե-  
ղի պիտի ունենայ Հայ Աւետարանա-  
կան դպրոցին ի նպաստ տրուելիք  
Հանդէսը, որուն ներկայ գտնուողնե-  
րը պիտի կրնան ունկնդրել դաշնակի  
ջութակի և երգիչնոյ վրայ ընտիր  
կտորներ երգելով հանդերձ:

Անդրիացի նշանաւոր տիկին մը  
անձնուիրաբար յանձն առած է մե-  
սերօրներով (սոյո) մասնակցել Հան-  
դիսին:

Նոյնպէս Անդրիացի Պարոն մը  
ստանձնած է որովայնախօսութիւն-  
ներով կարի հետաքրքրաշարժ և շա-  
հեկան ընել երեկոյթը:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն

Հաւաստի ազգերներէ կը տեղեկա-  
նանք թէ ամենայն Հայոց Հայրապե-  
տի մասնաւոր հովանաւորութեամբ և  
օժանդակութեամբ ներկայ տարւոյ  
կէսի մտերը Աղեքսանդրիոյ կամ  
Գահիրէի մէջ պիտի հրատարակուի  
«Արեւմիտ» անունով յատկապէս  
Հայ իզական սեռին նուիրուած  
ամասհանդէս մը ընդ խմբազը-  
րութեամբ Օրիորդ Մառի Պէյլէր-  
եանի, որուն պիտի աշխատակցին  
մեծաւ մասամբ յայտնի կին զրոյնե-  
րու և այլերու խմբակ մը:

«Արեւմիտ» հանդէսը պիտի նուիր-  
ուի մասնաւորապէս Հայ կանանց դա-  
տին, իզական սեռի կեանքի բարեւո-  
ման, անոր արդար ու հիմնաւոր իրա-  
ւունքներու պաշտպանութեան և փո-  
խադարձ պարտականութիւնները յի-  
շեցնող և շեշտող սկզբունքներու, մէկ  
խօսքով նա պիտի լինի օրկան իզա-  
կան սեռի բոլոր յառաջդիմական  
ձգտումներուն:

«Արեւմիտ»ը պիտի ունենայ զուտ  
գրական ուղղութիւն, որուն պիտի  
կցուի Արեւմտ յանձինք խորագրով  
մի առանձին բաժանմունք ևս:

Թերթի հիմնական ուղղութիւնը  
բնաւ առնչութիւն չունենալով քաղա-  
քական բնաւորութիւն ունեցող ո՛ր  
է ինչորի հետ, ամեն տեղ ազատ  
մտաւր ունենալու իրաւունքը պիտի  
վայելէ:

Իբր վազմտի համակիր այսպիսի  
կարիսր հանդէսի մը հրատարակու-  
թեանը, խմբագրութիւնս այժմէ կը  
փութայ շնորհաւորել Օր. Պէյլէր-  
եան՝ իր ազգոգուտ ձեռնարկին մէջ,  
և սրտամբ յաջողութիւն կը մտայթէ:

ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

ԼՍԱՐԱՆ ԸՆԹԵՐԵԱՏՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Նկատելով ժամանակէ մի՛ վեր անգամնե-  
րու կողմանէ ցոյց տրուած անտարբերութիւ-  
նը, մանաւանդ Գործադիր Ժողովոյ անգամ-  
ներուն մեծազոյն մասին հրաժարած ըլլալը,  
Գիւսանս պարտք կը նկատէ հրատարակ  
Ընդհանր ժողովոյ բոլոր անգամներն որոնք կը հե-  
տաքրքրուին տակալին ընկերութեան վիճա-  
կով կարենալ խորհրդակցելու համար ընկերու-  
թեան արդի անկերպարան կացութեան վրայ  
է ըստ այնմ վերջնական որոշումներ առ:

Ժողովը տեղի պիտի ունենայ յառաջիկա  
կիրակի, 3 Մայիս առաւօտեան ժամը 10ին,  
Միութիւն սպարառի շէնքին մէջ:

Գիւսան Ընդհ. Ժողովոյ  
Ատենապետ Ատենապետ  
Յ. ՄԱՐԶՊՈՒՆԵԱՆ Հ. Կ. ՊԵՂՊԵՐԵԱՆ  
1 Մայիս 1901 Գահիրէ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԼՈՐՏ ՍԱԼՁՊՐՐԻ:

Լորտ Սալզպրիի հանրային կեանք-  
է հրաժարումը կարծուածէն աւելի  
մտաւրուտ կերպի, փարլամենտի ներ-  
կայ տարեշրջանը լրջնալէ առաջ  
նոր նախարարապետի մը ընտրու-  
թիւնը հաւանական կրնայ ըլլալ:  
Մր. Պարթուր թերեւ ընտրուի նա-  
խարարապետ. Մր. Չեմպրէյն պի-  
տի ըլլայ այն ատեն առաջնորդը Ե-  
րեսփոխանական Ժողովին մէջ, և  
կառավարութեան յարձակողական  
ուժը մեծապէս պիտի աւելնայ:

ԹՕԼՍԹՕՅԻ ԿԻՆՐ

Ռուսաց «Մինոտի» օտկանը իր  
վերջին թիւերէն միտն մէջ տպած է  
Ռուս տիեզերահաշակ գրագէտ գրաֆ  
Ղ. Ն. Թօլսթոյի կիող՝ Բեզբասուրկի  
Մետրոպոլիտի ուղղած նամակը:

«Լրագրներու մէջ երեկ կարգա-  
լով իմ ամուսնոյս Թօլսթոյի՛ եկե-  
ղեցիէն անշատուելու մասին «Մինո-  
տի» ըրած անգութ կարգադրութիւնը  
չկարողացայ անտարբել մնալ. իմ  
վշտալի զայրութիւնը սահման չ'ունի:  
Եւ ես զայրացած եմ ոչ անոր հա-  
մար որ այդ թղթի շնորհիւ հոգեւ-  
րապէս պիտի կորուսուի իմ ամու-  
սինս:

Քայց այն պատճառաւ որ ես կը  
պատկանիմ եկեղեցիի մը ուրիշ եր-  
բէք չեմ կրնար հեռանալ:

Ձեր այդ վճիռը մարդկային զայ-  
րութիւնը դէպ ի Ձեզ գրգռելէ ուրիշ  
բան չէ. այդ վճիռը, ընդհակառակը  
պիտի կրկնապատկէ այն համակրան-  
քը զոր այսօր բովանդակ աշխարհ  
կ'արտայայտէ դէպի Թօլսթոյ»:

ՊՈՒՂԱՐՆԵՐԸ:

Կ. Պոլիս — Սթամբուլ մէջ բահա-  
նայ մը սպաննելու և ուրիշ յեղափո-  
խական գործերու ամբաստանութեամբ

բանասիրուած տաներկու Պուրկա-  
րացիներ դատուեցան Մանասզըրի  
մէջ — որոց մին մահուան դատապարտ-  
ուեցաւ, երբը ցկեանս բանասիրու-  
թեան և մեացկաւր այ՛ կրկուրէն մին-  
չև տասը տարի բանասիրութեանց:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՉԻՆԱՍՏԱՆ. — Չօրավար Ռալ-  
տերըրի բանակատեղոյն մէջ ծա-  
ղած հրդեհին աւթիւ խել մը մար-  
դիկ ձերբակալուած ու քննութեան  
ենթարկուած են:

Վերջին հեռագրի մը համեմատ՝ 8,000  
հողիէ բաղկացեալ գերմանական և  
ֆրոնտական զօրաց ջակաս մը թման  
— լիի սահմանադուրը հասած է ա-  
ռանց դիմադրութիւն տեսնելու:

ԵԻՐՈՊ. ՊԵՏՈՒԹԻՒՆԻՅՔ. — Յը-  
րանսա կը գրազի իր բարեկամական  
յարարբերութիւնները ամբապնդելու  
Ռուսիոյ և Իտալիոյ հետ:

Տան և հինգ օր առաջ՝ Իտալական  
Նաւատորմի թուրն այցելելը և  
երկու տերութեանց նաւատորմի լիւ-  
րան զիրար ողջունելը. երկուրդ՝ Ար-  
տաքին Գործոց նախարար Պ. Տէլ-  
գաստէի Ռուսիա այցելելը և Չարի  
ու իր կառավարութեան կողմէն սի-  
րալիւր ընդունելութիւն գտնելը նշմա-  
րել կուտան թէ՛ Յրանսա մեծ փոյթ  
կը տանի իր յարարբերութիւնները ա-  
ւելի ամբապնդելու Ռուսիոյ և Իտա-  
լիոյ հետ. սրուն միշտ պէտք ունի  
կարենալ պահելու համար իր հա-  
ւասարակցութիւնը ընդդէմ Գերմա-  
նո-Անգլիական համաձայնութեան:

ԺԱՄԱՆԱԿ

ՆՈՐ ՀԱՆՁՆՆԵՐ

ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ, ԵՒ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ  
Պ Ա Ր Ի Զ Ո Ւ Մ (ՅՐԱՆՍԱ)

Ժամանակը և երկարամայ գրական փոր-  
ձառութիւնը մեզ խրախուսուած են հիմնել Եւ-  
րոպայի մտաւորական առաջակարգ կենտ-  
րոնում, Պարբերում մի՛ նոր հայկական գրա-  
կան հանդէս:

Անկախ, զուտ գրական հանդէսի պա-  
հանջը երբէք այնքան զգալի չէ եղել Հայ  
ազգի մէջ, որքան այժմ, երբ նրա մայրե-  
նի լեզուն սկոյլ է ենթարկուի կորստեան  
եւ մահուան վտանգին, երբ նրա գրական  
կեանքն սկոյլ է մաշուիլ, ծիւրուիլ ենթար-  
կուիլ նոր արտագրութեանց անըպունակ  
լինելու վտանգին:

Գրականութիւն խօսքը Եւրոպայում, գրական  
կենտրոնում և զբարոցում, բոլորովին այն  
չէ՛ նշանակում, ինչ որ հասկացում է մեր  
ազգի մէջ:

Եւրոպական գրականութիւնը գրականու-  
թիւն է, որովհետեւ նրա մէջ ամենից առաջ  
կայ գիտութիւն: Եւրոպական գրականութիւնը  
ձրջմարտութեան ջահն է, եւրոպական գրա-  
կանութիւնը կեանքի գիտութիւն է, նրա  
ուսումնասիրութիւնը, նրա զարգացման պատ-  
մութիւնը, նրա հոգեբանութիւնը, նրա փի-  
լիսոփայութիւնը, նրա եզրաբանութեամբ, այ-  
սինքն այն ներգաշխուկութիւնը, որ կազմում  
է այդ կեանքի պակաս:

Հայ պօռնները, վիպագրները, մատե-

նագիրները, թատերագրները, շատ քիչ բա-  
ցառութեամբ լուել են և հեռացել գրակա-  
նութիւնից, այն պատճառաւ որ կուսակցա-  
կան պայքարը մեր մամուլի ու գրականու-  
թեան մէջ ստորացրել է տաղանդի արմը-  
ները ստպարէլ ասրով սղիտութեանը, որ  
«կուսակցութիւն» անուանուած շահանդի  
պանդաւորութեան ամենամեծ զենքն է:

Ահա մտա տան տարի է որ հայ ազգին  
մէջ աչքի ընկող վիպական, գրամատիւրա-  
կան, բանաստեղծական, կրիտիքական, ու  
պատմական երկերի թիւն օր ըստ օրէ սկսում  
է պակասիլ. մինչդեռ հայ ազգին մի բանի  
տարիներ առաջ այդպիսի երկեր տուող հե-  
ղինակներ ողջ են:

Հայ գրական կեանքին մէջ տոմանակի  
աշխատանքը կրած ու սպաւրիւղից յուսաշատ  
հեռացած հայ հեղինակների օրինակը վա-  
տեցուցիչ սպաւորութիւն է արել և նորա-  
գոյն սերնդի վրայ, որի մէջ գտնուած ստ-  
ղանգները իրենց բնածին ընդունակութիւն-  
ները սկսում են գործադրել առեւտրական  
եւ պաշտօնական սպարէզներում, հեռու  
մտաւր գրական աշխարհից:

«ԺԱՄԱՆԱԿ»ը գալիս է, որպէս զի հայ  
հեղինակների սպարէլը հրաւիրէ նոր պոյ-  
մանների մէջ, պատ թողնելով նրանց տա-  
ղանգները և մարի թոխը կուսակցական  
անմիտ բռնութիւնից և ջանալով սպահովել  
նրանց քրտինքի վարձն այնպէս. ինչպէս  
սպահովուած է կենսական բոլոր ստպարէզ-  
ներում ամեն մի արդար և սուրբ աշխա-  
տանք:

«Ժամանակ»ը գալիս է փնտրելու ու գրո-  
նելու մեր նորագոյն սերնդի մէջ այն տա-  
ղանգները, որոնք ստպարիկ պակասութեան  
պատճառով՝ չբացուած թաւամուտ են և  
մեռած անմասն քաղաքակրթութեան աշխարհի  
կեանքին:

Այդ նպատակով՝ ժամանակը լոյս և  
ազատ բանում է իր սխանակները հայ յայտ-  
նի հեղինակների առաջ և նրանց հետ սա-  
պարէլ է հրաւիրում այն ամենքին, որոնք  
զգում են իրենց սրտում կոյծ ու գրական  
կոչումն ու խոստանում է ամենայն քնքշու-  
թեամբ վերարբուել նրանց զգացմունքներին  
և յարգել նրանց համոզումները:

Մի և նոյն ժամանակ ժայռաւանդը գա-  
լիս է, որպէսզի հայ ժողովրդին հայ լեզուով  
ժանտեղանք եւրոպական ամենաւերի երկե-  
րի հետ, որ հեղեղի պէս ամեն օր լցնում  
են եւրոպական գրական աշխարհը և որից  
անմասն է մեռած հայ ժողովուրդը:

Այդ նպատակներով «Ժամանակ»ի խմ-  
բագրութիւնը դիմել է լոյրոյ հայ և բազ-  
մաթիւ եւրոպական յայտնի գրագէտներին  
ու նրանց մեծամասնութիւնից ոչ միայն ստա-  
ցել է սիրայօժար համաձայնութիւն, այլ և  
բաշմաթիւ ընտիր երկեր, որոնք գտնվում  
են խմբագրութեան պօրտֆէլլում:

Շատերը կը հետաքրքրուին թէ ինչ պի-  
տի լինի «Ժամանակ»ի ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ:  
Այդ բարը բոլոր բառերից աւելի անգիտակ-  
ցաբար ու կեղծ մտքով է գործածվում հայ-  
կական յիշաներում: Մտացուել է ճշմար-  
տութիւնը, գիտութիւնը, գեղարուեստը ու  
նրան փոխարինել են «ազատամիտ, յետա-  
դիմական, յառաջդիմական» անմիտ բառերը:

Սա մի կեղծ գրութիւն է, որ ստրկացրել  
է հայ ժողովրդի միտքը, ու պէտք է հայ  
ազգի միտքն ազատուի այդ ստրկութիւնից:

ՃԵՄԱՐՏՈՒԹԻՒՆ, ԳԻՏՈՒԹԻՒՆ,  
ԳԵՂԱՐՈՒԵՍ: Ահա ժԱՄԱՆԱԿի ուղղու-  
թիւնը: Ճշմարտութիւնը հայ ազգին կտայ  
իրաւունք քաղաքակրթութեան ազգերի ընտա-  
նիքի մէջ մտնել, գիտութիւնը հայ ազգին  
խոկական ազատութիւն կտայ, որովհետեւ

առանց գիտութեան չկայ ազատութիւն, որովհետեւ տգէտ մարդը չէ կարող ազատ լինիլ. գեղարուեստը հայ ազգին կտայ բարձր հոգեկան զուարճութիւն:

Մեզ ուզում են հաստատել որ հայ ազգը պլյաստիկ է, որ նա գտնուում է մահուան առաջին շրջանի մէջ ու արդէն տարրալուծուում է, որ նա ոչ բարոյական ապագայ չունի: Իսկ մենք կարծում ենք որ հայ ազգը հիւանդ է ու հիւանդ է այն սոսկալի գերմարդկային տառապանքներից որ նա մինչև այսօր կրել է:

«Ժամանակ»ը ցանկանում է փնտռել ու սիրել այն ամենն, ինչ որ այդ կազմուածքը միացնում է ու կազդուում է ոչ այն, ինչ որ այդ կազմուածքը յոշոտում է, բաժանում է թուլացնում ու այդ նպատակով ՚ի դործ է հրաժարում այն բոլոր հայ դժբեր, որոնք ցանկանում են ու իրենց մէջ կարողութիւն են զգում պիտանի լինել հայ ազգին ու մարդկութեան:

«Ժամանակ»ի խմբագրական ու տնօրէնն է Պ. Ս. ՀԱՅՈՒՄՆԱՆ

«Ժամանակ»ի առաջին հասարակարկուի միջոցով այն բաժանորդներին, որոնք կտարագրուին մինչև ներկայ թուականի յունիս 10ը (ն. ա): Այդ թուականից յետոյ ստորագրուողներին խմբագրութիւնն չէ խոստանում 1 թիւը, որ պիտի տպագրուի այն բանակութեամբ, ինչ բանակութեամբ ստորագրուողներ լինին մինչև յունիս 10 (ն. ա):

«Ժամանակ»ի 1 համարը Պարբեր փոստին կյանքնուր ճիշդ Յունիս 1-ին (ն. ա):

1901 Յունիս 1-ից Պարբերում կուկու լոյս տեսնել հայերէն լեզուով

« Ժ Ա Մ Ա Ն Ա Յ »

Հանգէս գրական, հասարակական, գեղարուեստական, քաղաքական:

ԺԱՄԱՆԱԿը կունենայ այն բոլոր բաժինները, ինչ որ ունին եւրոպական գրական հանգէսները. առանձնապէս ուշադրութիւն դարձնելով գիտնական ու գեղարուեստական բաժինները վրայ:

ԺԱՄԱՆԱԿին աշխատակցելու պատրաստականութիւն են յայտնել բազմաթիւ հայ եւ եւրոպայի յայտնի հեղինակներ, որոնց երկերը արդէն ստացիլ է խմբագրութիւնը:

ԺԱՄԱՆԱԿը արդիւցած կը լինի 3 տպագրական թերթերից (80 էրես La Revue et Revue des Revues հանդիսի գերբով):

ԺԱՄԱՆԱԿի առաջին համարը լոյս կը տեսնի ճիշդ 1901 թուականի յունիս 1ին եւ ներկայ թուականին կը հրատարակուի երկու ամիսը մի անգամ, այն է յունիս 1. սեպտեմբեր 1 ու նոյեմբեր 1. Իսկ սկսած 1902 թուականի Յունուար 1-ից կը հրատարակուի իւրաքանչիւր ամիս:

Հարկ եղած դեպքերում, ԺԱՄԱՆԱԿը կը լինի պատկերազարդ եւ կը տպագրէ եւրոպական երկերի բնագիրը եւրոպական լեզուներով, հայերէն թարգմանութեան հետ միասին:

Քայլուած է բաժանորդագրութիւն 1901 եւ 1902 թուականներ: Բաժանորդագրութեան պայմանները պարզուած են հետեւեալ աղիւսակի մէջ

Բաժանորդագրութիւն 1901 թուականի (կիսամեակ)  
Ռուսաստան . . . . . 3 ուրբի.  
Անգլիա . . . . . 7 շիլին,

Ֆրանսան, Պուլիարիա, Պարսկաստան, Ռումանիա, Թուրքիա, Եգիպտոս, Յունաստան, Աւստրիա. 8 ֆրանք.

Ամերիկա . . . . . 1 դոլար (ոսկի) Բաժանորդագրութիւն 1902 թուականի (12 գիրք)

Ռուսաստան . . . . . 10 ուրբի  
Անգլիա . . . . . 1 ֆետ. ստերլին  
Ֆրանսա, Բուլղարիա, Պարսկաստան, Ռումանիա, Թուրքիա, Եգիպտոս, Յունաստան, Աւստրիա. 25 ֆրանք.

Բաժանորդագրութիւն 1901 եւ 1902 թուականների համար (15 գիրք)

Ռուսիա . . . . . 12 ուրբի  
Անգլիա . . . . . 1 ֆետ. ստերլ. եւ 7ը շիլ.  
Ֆրանսա, Բուլղարիա, Պարսկաստան, Ռումանիա, Թուրքիա, Եգիպտոս, Յունաստան, Աւստրիա, 30 ֆրանք.

Ամերիկա . . . . . 6 դոլար:  
Ամենայն տեղերից գիծել հետեւեալ հասցեով.

Paris, (France) 64 rue Claude-Bernard Directeur de la Revue « Jamanak » S. Hakhoumian

Ա. Զ. Դ.

Շատերու կողմէ յայտնուած փափաքի մը գոհացում տալու եւ մեր ընթերցողներու գիւրութիւն մը ընծայելու նպատակով, այսուհետեւ մեր թերթը հատով պիտի ծախուի Շարա Ազգա-էլ-Ազիզի սկիզբը Պ. ԿԱՐԱՊԵՏ ԵՐԶՆԱՅԵԱՆԻ խանութը:

ՏՈՒՌԱ ՄԻՒԶԻԼՍԱՆ (ԻՍԼԱՄԱԿԱՆ ՕՐԷՆՍԳԻՏՈՒԹԻՒՆ)

Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

Սոյն հրատարակութեան առաջին մասը՝ Եգիպտական արդարութեան Գործոց Նախարարութեան կողմէն նիւթական վարձատրութեամբ դնա-

հատուած եւ Եգիպտոսի դատարաններուն մէջ գործածութիւնը պաշտօնապէս ընդունուած է:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ընդհ. տեսութիւն ժառանգական օրինաց եւ ժառանգութեան իրաւաց ծագման վրայ. — Ժառանգութեան պայմանները. — Ազգականութիւն եւ առիճանները. — Գերութիւն եւ ժառանգութեան հետ ունեցած կապերը. — Ժառանգութեան զրկող պատճառներ. — Մարգասպաններու ժառանգութիւնը. — Տիէթ (մարդու արեան գինը). — Ժառանգութեան մը պարտքը եւ պահանջը. — Ժառանգորդներու կարգը իրենց առիճաններով:

Ժառանգութեան օրէնքին տրամադրութիւնները ուրոյն ուրոյն մեկնուած են: Գրքոյկին վերջը դրուած է ցանկ մը որ մատչելի եղանակաւ կը նշանակէ թէ ժառանգութեան օրինական բաժինները ինչպէս կը բաժնուին:

Երկրորդ մասը մտաւ ժամանակէ լոյս պիտի տեսնէ՝ Խեմամակալութեան կտակի, Մշակութեան, Արեան Գնոյ վրայ ընդարձակ ծանօթութիւններով: Գին 10 ԳԱՀ. ՈՂ.Զ

ՊԱՆԳ ԼԻՍՆԵԶ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱՆ ԵԿԻՊՏՈՍԻ

Մ. ԱՍՍՕՅԵԱՆ

Լիսնի հանրաճանօթ զբամաստունը, այս անգամ ունեցու իւր Եգիպտոսի գործակալն ալ, Տ. Մ'կրտիչ Սոսոյեան, որ իւր հրատարակչին ցոյց տուած պարկեշտ գործունէութեամբն ամենուս վստահութիւնը կը վայելէ:

Սոյն գործակալութիւնը, 11 Սեպտ. թիւ իրեն յանձնուած եւ Լիսնի քաղաքապետութեան պաշտօնապէս վաւերացուած փոխանորդագրի համաձայն, պիտի կատարէ Պանգ Լիսնեզի միջոցաւ ամեն տեսակ զբամական եւ

ֆուէտի ֆոնդէյէ, վիլ տը Բարիի եւ Գազլիսկան ամէն արժեթուղթերու գործողութիւններ, գանձումներ: Ամսական չնչին գումարի մը խնայողութեամբ ձեռք կը բերուի քիչ ատենէն, պահեստի բաժնեթուղթ մը, վիճակահանութեամբ երաշխաւորուած:

Փախարդները հաճին գիծել Նիւպատի վրայ փաստաբան Ռարթաքիի զրասնեակը:

Թղթակցութիւն եւ կամ դրամ զըրկել հետեւեալ հասցէին:

Մ. ՍՕՍՕՅԵԱՆ  
Ի ԳԱՀԻՐԷ

ՊԵԼԱՆԱ-ՅԻՅՄԱՆԵԱՆ ԸՆԿ.  
ԱՄԵՐԻԿԱՆ ԴԵՐԱՎԱԿԵՐ  
ԱՐԱՅ ԵՒ ՏՈՒՆԱՅ  
ԵՒ ԶԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ

Ապրիլի մեծ պողոտային վրայ Տայիլայի Սանիթի գիմացը, նախկին Էլեկտրական գործիներու վաճառատունը:

Վերջէս Ամերիկայէն հօս եկած հաստատուած ըլլալով կը յայտարարենք արդոյ հասարակութեան թէ՛ պատրաստ ենք գոհացնել մեզ գիծող Պան. յաճախորդները, գործի մարտութեան, զինքու չափաւորութեան եւ ճշդապահութեան կողմէն:

Մեր գործատեղոյն մէջ կ'աւանդուին նաև ձեզ գիտութեան գասեր ամերիկեան ամենալեղիշին կատարելագործուած մէթոտով,

Մանրամասնութեանց համար գիծել մեր գործատեղին:

Le Gérant J. MUNIER

Տպա. «Միւսթիւն».— Թ. Ս. Փափազեանի

Տ Պ Ա Ր Ա Ն  
Մ Ի Կ Ա Հ Ի Ր Է  
Ի ԳԱՀԻՐԷ  
ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՍՈՒԳԱԹԵԱՄԻ ԶԻՇԴ ԴԻՍԱՑ  
ՏԷՐ ԵՒ ՏԵՕՐԷՆ  
ԹՈՒԳՈՄ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ  
Սոյն նորակազմ տպարանին մէջ կը տպուին հայերէն ու եւրոպական լեզուաւ ամեն տեսակ հրատարակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այլատուներ, մահազգեր, հարսանեաց հրաւիրագրեր, կանոնագրեր, նամակազուլներ, պահարաններ, հաշուեցուցակներ եւն. Յանձնարարութիւնները կը կատարուին փոքրով, ամենայն խնամով եւ ճաշակատար սպազորութեամբ:  
ԶՍ.ՓԱԿՈՐ ԳԻՆԵՐՈՎ